ղի հյուսիսային կողմը յեղած բերդի դրան կամարակալ քարի վիշապների քանդակը (պատկ. 67), վորպես փոփոխակ Բաղդատի Թալիսման կոչված դրան կամ կամ Հալեպի միջնաբերդի դրան ճակատի քանդակին. նույն իսկ գործադրության տեղն արժանի յե ուշադրության։ Առինջի բերդը հին է, պարսպի ներքևի սև քարերի խոշորությունից դատելով, հավանորեն, ուրարտական վերջին շրջանների գործ. բայց վերևի քարերը հետո յեն շարված։ Դրան ձախ կողաքարի արձանագրությունը մեզ հնարավորություն է տալիս դրան կողքերի քարերի ամենավերին փոփոխությունների մոտավոր ժամանակը վորոշել. «տր Մանվէլ քարգործ որդի տր Յովհանէսին յիշեցեք ի քս ամէն. Թվ. ՋԾ»=1501։ Այս արվեստավորի ուրիշ քանդակներն էլ կան բերդի մեջ յեղած փոքրիկ յեկեղեցու ավերակներում։ Այս թվականն, ի հարկե, ապացույց չե, վոր կամարակալ քարն էլ այդ ժամանակից է ծագում. Առինջը, գերեզմանական բազմաթիվ գեղեցիկ հուշարձաններից և ձեռագրական հիշատակարաններից դատելով, ԺԳ. և ԺԴ. դարերում մի կարևոր կեդրոն եր և այդ ժամանակի գործ ենք համարում նաև մեր վիշապները։



Պատկեր 65.
Անիի պարիսպի առյուծը.

Սրանց վերա ավելացնենք և առյուծի մարմնով և մարդկային դեմքով սֆինքսները կամ թռչունի մարմնով և կնոջ գլխով պարիկները, հավասարապես սիրված հայ և մուսուլմանական արվեստների մեջ[1], վորոնց հրաշալի որինակներն ունինք հայ քանդակագործության, և մանավանդ մանրանկարչության մեջ (Պոռշյան վիմափորները-ինը կոշտ են և վոչ գեղեցիկ)։ Ահա մեր ցուցադրած յերկու սֆինքսները, վորոնք բարձրակոչ աղաղակում են, վոր ծագմամբ կապ ունին սասանյան և նախասասանյան ավանդների հետ, մինչդեռ նրանք նկարված են ՈԿԸ=1219 թվին Հառիճի վանքում Հովհաննես գրչի ձեռքով, «յառաջնորդութի Գրիգորոյ վարդապետիս, որդւոյ Արասայ, որ եկն ի սբ ուխտէն Սանահնէն առաջնորդ մաւրս լուսոյ և սպասաւոր» (պատկեր 68—69)[2]։ Յեվ վորքան նմանություն և համեմատելի

1 Սֆինքսներ՝ Հայոց մեջ Հառիճի տաճարի արևելյան պատի անկյունում (տ. պատկ. 1), և Մակարա վանքի գավթի վերա. իսկ Դիարբեքիրում Amida. *89. 346. Տախտ.* XVIII. *1. Որթոքիդ Մահմուդի ժամանակից՝ 1208/9 թվին։*

*2 Ձեռ. Էջմ. № 1382. 306բ։ Մեր սֆինքսներն առնված են 32բ և 47բ։ Առաջինը ներքևի լուսանցքի ձախ անկյունում, առյուծի մարմնով, թռչնագլուխ պոկետեր կան սրանց և Պիզայի Կամպո—Սանտոյի բրոնզե գրիֆոնի մեջ, գլխի ձևակերպությամբ նման մեր թռչնագլուխ կորճառյուծին, ազդրի և թիակի սեպաձև նշանով նման յերկուսին էլ, վոր Ֆատիմիդների շրջանի գործ է համարվում, խաչակիրների ժամանակ Իտալիա փոխադրած *։ Ֆատիմիդներին էլին յենթարկված Ժ. դարու վերջերից Ասորիքն ու Որոնտի յերկիրները, վորոնց պետության մեջ փոքր դեր չեն կատարել և հայ տարրերը։*

Բայց ավելի վաղ նույն թռչնագլուխ կորճառյուծները իրար դեմ, կարծես, պատրաստ իրար վերա հարձակվելու, տեսնում ենք կոպտական ձեռագրական արվեստի մեջ (պատկ. 70), վորի ժամանակը, թեև վորոշել չենք կարող, բայց հունական հնագրության հետ համեմատելով, հավանորեն, վոչ ուշ Թ—Ժ. դարերից։ Իսկ աղջկագլուխ թռչնամարմին պարիկն ունինք նույն կոպտական արվեստում արդեն Ալեքսանդրիայի նշանավոր Տիյեզերական ժամանակագրության մեջ, վոր Ե. դարու գործ է համարվում (պատկ. 71), գրված և նկարազարդված պապիրուսի վերա[1]։ *Հայ արվեստի*

չով և մարդկային գլխով, բարձր թագով զարդարված. պարանոցը փողպատի նման պատած կարմիր կտորով, վերան սև բծեր, իսկ փողպատի քղանցքները բուսական զարդով։ Թևերը վեր են ցցված սասանյան կենդանակերպների նման։ Թիակի և ազդրի վերա սեպաձև մի նշան, մարմինը դեղին է և յեզերված սև բծերով։ Յերկարությունն է 7 սմ.։ Իսկ յերկրորդը առյուծի մարմնով, վիշապագլուխ պոչով, գլուխը թռչունի, սուր ու կեռ կտցով և ականջներով, պարանոցի տակից կախված աքաղաղի մորուքով։ Պարանոցը զարդարուն է, վերից վար կարմիր և դեղին ժապավենների պարանոցի վերին մասում մանյակով։ Մարմնով կանաչ է, գոտին դեղին. թևերը արմավենիկի նման և վեր բարձրացրած. ազդրի և թիակի վրա ստորակետի կամ սեպի նման նշան. մարմինը բծերով։ Մեծությունն է $7^1/_2$ սանտիմետր ըստ յերկարության։

Արեվելյան վոսկերչական գործ. **Պատկեր 66.**

* Migéon. Manuel d'Art Musulman. Paris. II. 1907. *221/22։ Al.* Gayet. L'art Arabe. Paris. *185/6.Թ. Ծագումը կապում է կոպտական արվեստի հետ։*

1 Հրատարակել է Strzygowski-ն. Eine Alexandrini-